ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
N «ԳՀԱՊՁԲ-2017/16-12-1-ԵՊԲՀ»

ք. Երևան «23» 01 2018թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Վ.Թորոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է՝ 20,126,000,00/քսան միլիոն հարյուր քսանվեց հազար/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել

մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: *Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:* Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

ՀՀ, ք.Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ

հ/հ 1150016651880О

ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր Ա.Ա. Մուրադյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ

ք. Երևան, Զաքյան 8

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930041595160100

ՀՎՀՀ 02604367

Հեռ. (010)516794

Տնօրեն Վ. Թորոսյան

/ստորագրություն/

Կ.Տ

		ախտահանիչ շարժական KXD-I	Չինաստան	ապահովելով սենյակում օդի բարձրակարգ մաքրում: Օդի վերաշրջանառիչը հատկապես կիրառվում է առողջապահական կազմակերպություններում, լաբորատորիաներում, ինստիտուտներում, գիտահետազոտական ստորաբաժանումներում և տնային պայմաններում: Օդի վերաշրջանառիչը համալրված է բալաստե հանգույցով, սինխրոնիզացման գործառությամբ, ճառագայթը արտացոլող սարքով, լարով ջերմային կաթոդը միացնելու համար: Լամպի տրամագիծը՝ 19,9մմ, ալիքի երկարությունը՝ 235.7նմ , ճառագայթային ինտենսիվությունը չափվում է 40-95 uw/cmԱ տեղում մեկ մղոն հեռավորության վրա, երկու միանման ուլտրամանուշակագույն լամպեր, լամպի կյանքի տևողությունը 8000 ժամ: Էլ սնուցումը՝ 220Վ/50Հց Մուտքային հզորությունը՝ 15Վտ x2 Շրջակա միջավայրի ջերմությունը՝ + 5-40 °C Ընդգրկույթը 30/45/60/90 բոպե /Տայմեր/ Չափսերը՝ 160x106x790մմ± 5%: Շարժական, ունի 4 անիվ: Պահանջվող սարքավորման համար, մասնակցի առաջարկի արժեքի մեջ ներառված է մոնտաժը, կարգավորումները, տեխնիկական և բժշկական անձնակազմին սարքի օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային սպասարկումը տեղադրման պահից 12 ամիս:					Մուրացան 114 հասցեներով		2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայն ազիր կնքելու օրվանից հաշված 10 օրացույցային օրվա ընթացքում
4	33151200	Թթվածնային ֆլոումետր խոնավացուցիչ 031002	Protec Export Inc. Բրազիլիա	Պատին ամրացվելու հնարավորությամբ, ծայրակալները wurth ստանդարտի: Ֆլոումետրի կորպուսը բարձրորակ չժանգոտվող պողպատից է, փականային համակարգը՝ չժանգոտվող մետաղից: Բարձր խտության պոլիմերային ֆիլտր, բարձր ջերմաստիճանի ու գոլորշու պայմաններում ստերիլիզացված խոնավացուցիչ, գազի տեսակը՝ բժշկական թթվածին, աշխատանքային ճնշումը՝ 75psi, հոսքի մաքս. արագությունը 15լ/ր, կարգավորվող հոսքի արագության հնարավորություն, 1-10լ/ր և 1-15լ/ր, խոնավացուցիչի տարողունակությունը՝ 170մլ, չափսերը՝105x60x305մմ: Պահանջվող սարքավորման համար, առաջարկի արժեքի մեջ ներառված է մոնտաժը, կարգավորումները, երաշխիքային սպասարկումը տեղադրման պահից 12 ամիս:	հատ	44 000,00	2 640 000,00	60	ք. Երևան Հերացի 58 կամ Մուրացան 114 հասցեներով	60	Նախատեսվում է ձեռք բերել 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայն ազիր կնքելու օրվանից հաշված 10 օրացույցային օրվա ընթացքում
6	33121160	Ավտոռեֆրակտոմետր HRK 7000A	Huvitz Co., LTD Կորեա	Չափման ռեժիմները՝ Շարունակականկերատոմետրիա+ ռեֆրակտոմետրիա Ռեֆրակտոմետրիա	հատ	4 500 000,00	4 500 000,00	1	ք. Երևան Հերացի 58 կամ	1	Նախատեսվում է ձեռք բերել

				Կերատոմետրիա Ծայրամասային Կերատոմետրիա Կոնտակտայինոսպնյակի բազային կոր Գրաֆիկական ցուցադրում վերամշակման քարտեզի վրա, որը բարելավում է հուսալիությունը օգտագործողի ընկալումը Ռեֆրակտոմետրիա՝ Գագաթային տարածությունը (VD)՝ 0.0, 12.0, 13.5, 15.0մմ Սֆերա (SPH)՝ -25.00 … +22.00D (երբ VD=12մմ) Մխոց(CYL)՝ 0,00 … 10.00D (քայլը՝ 0.12 և 0.25D) Առանցքները (AX)՝ 1...180° (քայլը՝ 1°) Միջբբային հեռավորություն(PD) 10...85մմ Չափումներն իրականացնելու համար բբի տրամագիծը՝ Ø2.0 մմ Կերատոմետրիա՝ Կորության շառավիղը՝ 5.0 … 10.2 մմ (քայլը՝ 0,01մմ) Եղջերաթաղանթային ռեֆրակցիա՝ 33.00 … 67.50D, եթե եղջերաթաղանթային էկվիվալենտ ռեֆրակցիոն ուժը 1.3375 է (քայլը՝ 0.05/0.12/0.25 D) Եղջերաթաղանթային աստիգմատիզմ՝ 0.00 … -15.00D (ավելացումները՝ 0.05/0.12/0.25D) Առանցքները՝ 1...180° (քայլը՝ 1°) Եղջրաթաղանթի տրամագիծը՝ 2.0 … 14.0 մմ (քայլը՝ 0.1) Ավտոմատ թրեքինգի աշխատանքային տիրույթը՝ Վերև/ ներքև՝ ±15 մմ Աջ/ձախ՝ ±5 մմ / ±2 մմ Առաջ/հետ՝ ±5 մմ / ±2 մմ Auto Shooting՝ Վերև/ ներքև՝ ±13 մմ Աջ/ձախ՝՝ ±13 մմ Առաջ/հետ՝ +/- 0.5 մմ Հորիզոնական ուղղության շարժական միջակայքը՝ Վերև/ ներքև՝ 30 մմ Աջ/ձախ՝ 92 մմ Առաջ/հետ՝ 38 մմ Տվյալների պահպանում՝ Առնվազն 10 չափումների արդյունքների պահպանում յուրաքանչյուր աչքի համար Էներգախնայող ֆուկցիայի առկայություն՝ սարքի ավտոմատ անջատում 5 րոպե չօգտագործելու դեպքում Հավելյալ պարագաներ՝ Տպիչ՝ ներկառուցված ջերմային տպիչ Ներկառուցված տպիչի արագությունը վերջնական չափված տվյալների արտածման ժամանակ՝ 3 վրկ Էկրան՝ 6.5" TFT LCD գունավոր մոնիտոր Սնուցում՝ 100...240 V, 50/60 Հց Հոսանքի դասը՝ 1A Ստանդարտներ՝ ISO13485, CE Mark (93/42 / EEC)					Մուրացան 114 հասցեներով		2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայն ազիր կնքելու օրվանից հաշված 10 օրացույցային օրվա ընթացքում

				Պահանջվող սարքավորման համար, առաջարկի արժեքի մեջ ներառված է մոնտաժը, կարգավորումները, տեխնիկական և բժշկական անձնակազմին սարքի օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային սպասարկումը տեղադրման պահից 12 ամիս:							
7	33111000	Վիրաբուժական էլեկտրոդանակ ZEUS-400	Zerone Co., LTD Կորեա	Բարձր հաճախականության վիրաբուժական էլեկտրադանակ, որն օգտագործվում է տարբեր մոնոպոլյար և բիպոլյար վիրաբուժական միջմտությունների ժամանակ, երբ անհրաժեշտ է բարձր ճշգրտություն և հուսալիություն Մոնոպոլյար մաքուր կտրման ռեժիմում առավելագույն ելքային հզորությունը՝400W Մոնոպոլյար կտրման կոագուլյացիոն ռեժիմում առավելագույն ելքային հզորությունը՝ 300W Մոնոպոլյար կտրման ռեժիմում առավելագույն ելքային հզորությունը՝ 250W Բիպոլյար կտրման ռեժիմում առավելագույն ելքային հզորությունը՝ 120W Բիպոլյար կոագուլյացիա ռեժիմում մաքսիմալ ելքային հզորությունը՝ 100W Տասներեք տարբեր հոսանքների առկայություն, որից 3-4-ը՝ մոնոպոլյար կտրվածքի համար, 3-4-ը՝ մոնոպոլյար կոագուլյացիայի համար, 2-ը՝բիպոլյար կտրվածքի, 3-ը՝բիպոլյար կոագուլացիայի Մոնոպոլյար կտրման ռեժիմ՝ Հոսքերը՝ մաքուր կտրման, նվազագույն հեմոստատիկ ազդեցությամբ և կտրվածքի ու կոագուլյացիայի հոսքերի մոդուլացված համադրությամբ խառը կտրման; միջին հեմոստատիկ ազդեցությամբ և կտրվածքի ու կոագուլյացիայի ընթացիկ մոդուլային համադրությամբ խառը կտրման, ուժեղ հեմոստատիկ ազդեցությամբ ցողման տեսակի և կտրվածքի ու կոագուլյացիայի հոսքերի մոդուլացված համադրությամբ խառը կտրման Մոնոպոլյար կոագուլյացիա՝ Բոլոր հոսքերը ավտոմատ օպտիմալացման համակարգով՝ «ստորջրյա» ֆունկցիայով: Չորս հոսքերի առկայություն՝հիմնական հպումնային, փափուկ՝ կոագուլյացիա, ճշգրիտ, նվազագույն մակերեսային ազդեցությամբ և խորը գործողությամբ; Ֆուլգուրացիա՝մակերեսային ազդեցությամբ և խորը գործողությամբ կոագուլյացիա; Ցողում՝ առանց շփման կոագուլյացիա, ուժեղ մակերեսային ազդեցությամբ և թեթև խորը գործողությամբ; Ավտոմատ՝ իմպուլսային գործողությամբ կոագուլյացիա Բիպոյլար կտրման ռեժիմ՝ Երկու հոսանքի առկայություն՝նվազագույն կոագուլյացիոն	հատ	2 900 000,00	2 900 000,00	1	ք. Երևան Հերացի 58 կամ Մուրացան 114 հասցեներով	1	Նախատեսվում է ձեռք բերել 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 10 օրացույցային օրվա ընթացքում

				ազդեցությամբ մաքուր կտրման և ուժեղ կոագուլյացիոն ազդեցությամբ խառը կտրման Ակտիվացիա Մոնոպոլյար և բիպոլյար ֆունկցիաների համար օգտագործվող կրկնակի ոտնակի և ձեռքի անջատիչի առկայություն Բիպոլյար էլեկտրոդի առկայություն՝ ոտնակով կամ ավտոմատ սկիզբ / ավարտ համակարգով (միայն կոագուլյացիայի համար) Կառավարում Միկրոպրոցեսորով կառավարման համակարգի առկայություն, որը մշտապես վերահսկում է բոլոր պարամետրերը Կարգավորումներ՝ Առջևի վահանակի վրա կարգավորումների և ճշգրտումների հնարավորություն 4 աշխատանքային ծրագրեր օգտագործելու հնարավորություն Անվտանգություն՝ Անվտանգության սխեմա չեզոք պլատֆորմների համար, NPCC համակարգ՝չեզոք պլատֆորմի հյուսվածքների հետ շփման միացումների և կոնտակտների ստուգում Սխալ հպման ժամանակ զգուշացնող համակարգի առկայություն՝վիզուալ ազդանշանի և հզորության նվազեցմամբ Գեներատոր՝ Բարձր հաճախականության գեներատոր, որն աշխատում է ազատ օսցիլյատորների սկզբունքով Դասակարգումը և տեսակը I-CF՝ հոսանքահարումից հիվանդի ապահովվածություն մինչև 10μA Դեֆիբրիլյացիայից պաշտպանություն Հոսանքը՝ 220V / 50Hz Սառեցումը՝ կոնվեկցիա առանց հովհարային համակարգի Մոնոպոլյար և բիպոլյար ռեժիմում աշխատանքային հաճախականությունների տիրույթը՝ 425 ... 525 կՀց Կոճակներով կարգավորող հզորություններ Աքսեսուարների միացում և ակտիվացում (ակուստիկ և լուսային ազդանշաններով) Աքսեսուարներ՝ Միանգամյա օգտագործման երկու կոճակով ձեռնաբռնակ Օպերացիոն ոտնակի առկայություն (օգտագործելի է որպես այլընտրանքային կարգավորիչ) Տափակ չեզոք պլատֆորմի առկայություն Համալրվածէ 10 կարճ ստերիլիզացվող Էլեկտրոդներով՝ 5սմ, բարակ ուղիղ, բարակ ուղղանկյուն, հանգուցային 4 մմ, հանգուցային 8 մմ, անկյունային կեռ, հաստ կոր, կլոր, գնդաձայր, ասեղ, նշտար: Բիպոլյար ունելի՝ստանդարտ եվրոպական միացմամբ - 4 հատ՝ Ուղիղ ունելի - 11,5 սմ Կոր ունելի - 11,5 սմ Կոր ունելի - 20 սմ Ուղիղ ունելի- 20 սմ							

				Երկբևեռ մալուխ Օգտագործողի ձեռնարկ Ստանդարտներ՝ ISO13485, CE Mark (93/42 / EEC) Պահանջվող սարքավորման համար, առաջարկի արժեքի մեջ ներառված է մոնտաժը, կարգավորումները, տեխնիկական և բժշկական անձնակազմին սարքի օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային սպասարկումը տեղադրման պահից 12 ամիս:							
8	33191490	Ինֆուզիոն պոմպ IP-7700	AMPall_Advanced Micro Pumping Technology Կորեա	Գծային պերիստալտիկ պոմպ ստանդարտ 3.6...4.2մմ PVC խողովակների հետ օգտագործման համար Օգտագործվում է ինչպես ստանդարտ 20 կաթիլ/մլ կաթոցիկներով կամ միկրոկաթոցիկներով ինֆուզիոն հավաքածուների, այնպես էլ 60 կաթիլ/մլ կաթոցիկների հետ՝առանց հոսքի արագության ավելացնելու անհրաժեշտության Մարտկոցով աշխատելու հնարավորություն՝ 4 ժամ, 125 մլ/ժ արագությամբ Գունավոր LCD էկրանի և թվային ստեղնաշարի առկայություն LCD ծրագրավորման էկրան, տվյալների մուտքագրման հնարավորություն, բժշկական անձնակազմի կանչի կոճակ, կաթեցման ավարտի ահազանգ, արագ տիտրման հնարավորություն, ծավալ-ժամանակային ծրագրավորում Հոսքի արագությունը՝ 0.1…999,9 ml/h, քայլը՝ 0.1 մլ Հոսքի մակարդակի աճը՝ 0.1 ml/hr Ներարկված հեղուկի ծավալը՝ 0.1 … 9999.9 ml, շեղումը՝ 1% Ժամանակի սահմանափակումը՝ 1ր.-ից մինչև 99ժ Օկլյուզիոն ճնշումը՝ ծրագրավորվող՝ 0…990մմ. սնդ. Ս Հատուկ հնարավորություններ՝տիտրում, հեղուկի բալանս, մաքուր ծավալ, կարգավորվող KVO, կարգավորվող ներարկման արագություն, անցկացված ինֆուզիաների տվյալների պահպանում, դոզավորման ռեժիմներ, բուժ. անձնակազմի կանչի կոճակի հնարավորություն OCC մակարդակը՝ 9 քայլ, 4.5 ...14.5 psi Չափսերը՝ 100x190x250 մմ Հոսանքը՝ AC 110/230 V, 50/60 Hz Հզորությունը՝ 40 VA Դասակարգումը՝ II դաս / CFտեսակ Մարտկոցը՝ Ni-Cd, շահագործման ժամանակը 1.5 … 2 տարի Գործողության պայմանները՝ 10 … 40 °, 30...85% հարաբերական խոնավություն Պահպանման պայմանները՝ 10 … 40 °, 30...95% հարաբերական խոնավություն Համալրումը՝ հիմնական սարք, հոսանքի լար, կանգնակի ներկառուցված կցորդիչ, ներկառուցված վերալիցքավորվող մարտկոց, օգտագործողի ձեռնարկ	հատ	480 000,00	7 200 000,00	15	ք. Երևան Հերացի 58 կամ Մուրացան 114 հասցեներով	15	Նախատեսվում է ձեռք բերել 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայն ագիր կնքելու օրվանից հաշված 10 օրացույցային օրվա ընթացքում

				Ծրագրավորվող մլ/ժ x ծավալ սահմանափակում, ժամանակային ծրագրային լիմիտ KVO: ծրագրավորվող/կարգավորվող1մլ/ժ-ից մինչև 10մլ/ժ Ներարկման արագությունը՝ ծրագրավորվող/կարգավորվող1ից մինչև 100մլ/ժ ինչպես հոսքի արագությունը, այնպես էլ ծավալը պետք է կարգավորվեն համաձայն մաքսիմալ թույլատրելի սահմաններին, հստակությունը ±5% Համակարգի կոնֆիգուրացիոն պարագաների, սպառվող նյութերի և պահեստամասերի հեշտ ձեռքբերման հնարավորություն Հոսանքը՝ 220V/50Hz ISO 9001, ISO 13485 և Directive 93/42/EEC Պահանջվող սարքավորման համար, առաջարկի արժեքի մեջ ներառված է մոնտաժը, կարգավորումները, տեխնիկական և բժշկական անձնակազմին սարքի օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային սպասարկումը տեղադրման պահից 12 ամսից ոչ պակաս:							
Ընդամենը						20 126 000,00					

Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը
Նախատեսվում է ձեռք բերել 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 10 օրացույցային օրվա ընթացքում
Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, այն է՝ ք. Երևան Հերացի 58 կամ Մուրացան 114 հասցեներով:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2	ք. Երևան, Զաքյան 8
«Հանրային գանձարան» ՓԲԸ, Տերյան մ/ճ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
հ/հ 1500166513800	Հ/Հ 1930041595160100
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 02604367
	Հեռ. (010)516794
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան	Տնօրեն՝ Վ. Թորոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«23» 01 2018 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2017/16-12-1-ԵՊԲՀ»
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39331100	Օդի վերաշրջանառիչ/ օդային ախտահանիչ KXD-I	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
2	39331100	Օդի վերաշրջանառիչ/օդային ախտահանիչ շարժական KXD-I	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
4	33151200	Թթվածնային ֆլոումետր խոնավացուցիչ 031002	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%

6	33121160	Ավտոռեֆրակտոմետր HRK 7000A	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
7	33111000	Վիրաբուժական էլեկտրոդանակ ZEUS-400	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
8	33191490	Ինֆուզիոն պոմպ IP-7700	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2	ք. Երևան, Զաքյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
հ/հ 1150016651 3800	Հ/Հ 1930041595160100
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 02604367
	Հեռ. (010)516794
Ռեկտոր Ա.Ա. Մուրադյան	Տնօրեն՝ Վ. Թորոսյան
------------------------------	------------------------------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2017/16-12-1-ԵՊԲՀ»
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2017/16-12-1-ԵՊԲՀ»
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն